Ժ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 8 ՅՈՒԼԻՍ 1906 — ԹԻՒ 827

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 "
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կ'ըլլայ:

—o—

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ է

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ", Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

Ի Ն Ձ Տ Ե Ղ Տ Ո Ւ Է՛ Ք

ՆՈՒԷՐ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ

Ինձ տեղ տուէ՛ք խիտ անտառներ սուրբ վայրեր,
Արիւն կ'հոսի խորէ՛ բացուած իմ վէրքեր.
Ձեռ ծածկեցէք մութ խորշերու ձեր կողքին.
Ինչպէս թաչուն կուգայ թառիլ ձեր ոստին:

Ես հո՛ս եկայ ազգիս ցաւը ողբալու,
Ես հո՛ս եկայ ծով արցունքներ թափելու։

Ես սգաւոր մինչեւ ի մահ ձեր կողքին,
Իմ արցունքս պիտի թափեմ այս հողին,
Մինչև ուռենի միայլ ուրիշ կանաչ ծառ,
Որ նա տեսնայ ազգիս ցաւը ու խղճա՛յ։

Ես հո՛ս եկայ, ազգիս ցաւը ողբալու
Ես հո՛ս եկայ ծովարցունքներ թափելու։

(Տարիներ վերջ՝ կանաչ ծառ մը խօսեց)

«Քու արցունքով ես ուռճեցայ վերաւո՛ր,
«Աչքս որ բացի, գքեզ տեսի սգաւոր,
«Դու հանգիստ կաց, ես արձագանք քո ձայնին,
«Պիտ՛ չարունակեմ քու ողբը այս անտառին.

«Նա հո՛ս եկաւ, ազգին ցաւը ողբալու,
«Նա հո՛ս եկաւ ծովարցունքներ թափելու։

«Դուցէ՛ օր մը այս ծառերը կ'սթափին,
«Ու կ'հասկնան, իմաստն քուկին ողբերին.
«Եւ այն ատեն գլուխ ծռեն քո շիրմին,
«Հողն համբուրեն՝ ու այնօրից ուխտուին։

Ուժգին ձայն մը նորէն կրկնեց անտառէն

Ես հո՛ս եկայ՝ ազգիս ցաւը ողբալու
Ես հո՛ս եկայ՝ ծով արցունքներ թափելու։

«Բիչ մը վերջր սեւ եկաւ, ճերմակ գնաց,
Ու այս անգամ ճերմակ եկաւ, սեւ մնաց,
Կանաչ ծառն համբուրեց ու հոգին փչեց,
Ճչաց ծառը բարձր լացեց ու երգեց։

«Նա հո՛ս եկաւ, ազգին ցաւը ողբալու,
«Նա հո՛ս եկաւ, ծով արցունքներ թափելու։

«Այդ երգերից մէկէն անտառը ցնցուեց,
Մռայլ տրտում ինքն ալ երգեց հեգնօրէն։

«Նա հո՛ս եկաւ մեր ցաւերը ողբալու,
«Անոր դարդը մեր դարդն էր, եկաւ մեզի պատմելու»։

ՆԷՇՈՒԷ
Յուլիս 5 1906

ՌԱՓՖԵԷԼ—ԼԱՄԱՐԹԻՆ
(Ամերիկա)

ԴԵՐԵՐԸ ՈՐՈՇԵՆՔ

Ա.

Այսօր քիչ թէ շատ խելքը գլխին հայի համար պարզ է թէ՝ հին սիստեմով և տակտիկով անկարելի է շարունակել Տաճկահայ ազատագրութեան գործը. Ժամանակը, երկրի պայմանները և, յեղափոխական տեսակէտից, և ժողովուրդի հասունութեան աստիճանը ստիպում են փոխել գործելակերպը. 97 թւականից սկսած ինձ համար, ինչպէս և ուրիշ դաշնակցական ընկերների, պարզ է եղել թէ այլեւս փոքրիկ ցոյցերը, հրասակախմբերը և տերորները, նոյն իսկ Սուլթանի սպանութիւնը ոչ մի արդիւնք չէին կարող տալ. որովհետեւ այդ տեսակ գործեր կատարվում էին ժողովրդին իր դարեւոր քնից, թմրութիւնից զարթեցնելու և արուեստականապէս տեղծված գոհ լինելու քողը պատռելու համար. Պէտք է ընդունել վերջապէս որ գործունէութեան առաջին շրջանը թէեւ մեծ, շատերիս համար անսպասելի, պոհերով, մասամբ հասան իր նախնական նպատակին—որը միջոց էր ուղղակի առաջադրված մեծ նըպատակին հասնելու համար. ու եթէ մի քիչ խենթութեան չափազանց եռանդի կնիքներ կրում, բայց և այնպէս մեռած ժողովրդին վստահութիւն ներշնչեց, գիտէր իր ուժերը.

Այսօր այդ ուղղութեան ժամանակը անցել է. և քաջութիւնը պէտք է ունենալ վերջակէտ դնել. Սակայն ինչպէ՞ս. ահա մի խոշոր հարցական, որի պատասխանը պէտք է գտնել.

Ես պէտք է ջանամ այդ հարցականի պատասխանը տալ և հաւատացած եմ որ եթէ ոչ ամբողջովին գոնէ մեծ մասամբ իսկական պատասխանը պէտք է լինի.

Ապստամբութեամբ իր վիճակը բարելաւել ձգտողը տաճկահայն է. այդ իր ըմբոստ քայլի պատճառով արհաւիրքների ենթարկվողը Տաճկահայն է. ուրեմն և նա պէտք է լինի իրեն համար ճակատագրական նշանակութիւն ունեցող գործի վարիչը, մանաւանդ որ նա յարմարութիւնները ունի, իբրեւ երկրի գիտակից, պայմաններին ծանօթ, իր գործելակերպը ստեղծելու.

Ռուսահայը պէտք է հանդիսանայ միայն իբրեւ օգնող, նիւթապէս և բարոյապէս. մի օժանդակ տարր. ճիշդ այն դերում պէտք է լինի ինչ դերում որ այսօր գտնվում է բուլգարացին, մակեդոնացի բուլգարների հանդէպ, երէկ յունաստանցին կըրետացիների հանդէպ.

Եթէ առաջ այդ դրութիւնը ստեղծելը անկարելի էր տաճկահայի, յեղափոխական տեսակէտից, տհասութեան պատճառով, այսօր անպայմանօրէն կարելի է. Երեւակայեցէք որ մեր յեղափոխական ուժերի ջլատման պատճառը այդ երկու տարրերի կատարելիք դերերի չփոթումն է եղել. 1891—92 թւականներին Քրիստափորեաններ և նազարբէկեաններ բաժանվում էին ինչ որ չնչին պատճառներով. Ռուսահայերն էին որ վիճաբանութեան էին ենթարկում Տաճկահայի ազատագրութեան ծրագիրը. Սա որքան ցաւալի և նոյնքան ծիծաղելի է. Մինչդեռ այն ժամանակ գոյութիւն ունեցող տաճկահայ ընկերները կարող էին ասել. պարոններ, ինչ էք գլուխ ջարդում. գործը մերն է. կարող է՞ք մեզ օգնել թէ ո՞չ.

Այսօր գործը բոլորովին տարբեր է. Արդէն Կովկասի մէջ ըսկսում են ըմբռնել թէ Ռուսահայի դերը ինչ պէտք է լինի այս դժւարին և շատ պատասխանատու խնդրում. Բացի այդ՝ Տաճկահայը արդէն ունի դառն փորձերից անցած մի յեղափոխական ինտելիգենցիա. Հնչակեան երկու հատւածները իրենց մէջ պարունակում են այդ ինտելիգենցիայի մեծամասնութիւնը, որոնք պարտաւոր են անմիջապէս խաչ դնելով բոլոր անցած ան-

մտութիւնների վրա, իրարու ձեռք մեկնել. բացարձակապէս ձուլվել. և դնել Կովկասահայերի առջեւ հեռաւեալ պայմանը. մենք պատրաստ ենք և ձեռք մեկնել մեր դաշնակցական ընկերներին. մեր նպատակը պիտի լինի միայն տաճկահայ ազատագրութեան գործը. Կովկասցին պէտք է հանդիսանայ իբրեւ նիւթապէս օժանդակող. մեր գործը պէտք է լինի միայն և միայն տաճիկ կառավարութեան հետ և նրա դէմ. Կարծում եմ թէ այժմ ազատ Մուրատը պէտք է կարողանայ այս խնդիրը կարգադրել և դա նրա ամենամեծ գործերից մին կը լինի. աւելի մեծ, քան Սասունի հերոսութիւնները. որովհետեւ այդ ձուլումը և դերերի որոշումը տաճկահայ ազատագրութեան գործը կը դնէ հաստատուն հիմերի վրա, հայ յեղափոխութիւնը կազատէ բազմաթիւ կենտրոններից, օրգաններից, լիազօրներից, կըստիպէ ուժերի ձուլումը, ամփոփումը և վերջապէս տաճկահային իրան կը ներշնչէ վստահութիւնը իր ճակատագիրը որոշելու գործը գիտակցօրէն առաջ տանելու համար։

Այս տեղ ռուսահայի և տաճկահայի անջատման խնդիր չը կայ. ինչպէս կարող են աղաղակել մի քանի փարիսեցի յեղափոխական անուն կրողներ։ Աշխարհագրականապէս սրդէն նրանք անջատ են. ռուսահայը երբէք միտք չունի անջատվել Ռուսիայից, ապստամբութեան դիմել և ոչ էլ կարող է գաղթել Տաճկաստան. ուզած չուզած նա միայն օգնելու վիճակի մէջ պէտք է մնայ. իսկ օգնողը վարել չէ կարող և ոչ էլ իրաւունք ունի իր նպաստի շնորհիւ վճռողական դեր խաղալ մի ճակատագրական խնդրի մէջ որի ձախ հետեւանքները տասնեակ հազարներով կեանք են արժում։

Կովկասահայը իր այսօրվան դիմագրական կռիւը առանձին է տանում։ Վճռողական ձայնը ինքը ունի։ Եթէ տաճկահայը մասնակցում է. մասնակցում է միայն օգնողի, աջակցողի դերում. բայց ոչ վարիչի. և այդ շատ բնական է։ Դիարբէկիրցին ի՞նչ որոշում կարող է տալ Թիֆլիսի կամ Երեւանի գործունէութեան մասին։ Ոչ մի նպատակայարմար որոշում. մինչդեռ Վանայ գաւառում պէտք է արշաւանք լինի դրա որոշումը Թիֆլիսում է տրվում։ Տաճկաստան լինելիք արշաւանքը կովկասցին է որոշում։ Նոյն ում ցոյց պէտք է. հրամանը Կովկասը կամ երկու երեք անհատներ տալիս։ Սա ինչ հակասութիւն է... ժամանակն է որ այս հակասութիւններին վերջ տրվի. և այդ հակասութիւնները տեղի են ունեցել, որովհետեւ թէ հնչակեան թէ դաշնակցական տաճկահայ յեղափոխականները չեն եղել իրենց իրական դերում. և այսօր ժամանակն է լինելու. հակառակ պարագային պէտք է ընդունել որ տաճկահայը դեռ էլի հասունացած չէ յեղափոխականապէս. և նրա յեղափոխական անունկրող գործիչները իրենց դերի մէջ չեն և կամ թէ յեղափոխութիւնը լոկ արեւստ են դարձրել, բայց ոչ միջոց ժողովուրդ ազատելու։

ՎԱՐՕ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՎՐՕՆԻԿ

Անցեալ օր մի յօդուածով նկարագրել էի այս տարվան պալքան. չրջանական ժողովը։ Այդ նկարագրութիւնը Ֆիլիպէի ընկերներից մէկին առիթ է տալ անմիջապէս չընկել մի սխալ եւ հաստատել միւս իրողութիւնները։ Սխալը նրանումն է, որ իմ յօդուածով Զ. ներկայացել է իբր բողոքողների ներկայացուցիչ մինչդեռ այդպէս չէ եղել։ Աւելորդ չենք համարում այդ նամակից քաղել բնորոշ կտորները.—«Զ.ի մասին գրուածը զարմանքով կարդացինք. որը իբր թէ բողոքող տարրին ներկայացուցիչն է եղել(!) ընդհ. ժողովի պատգամաւոր ընտրելու համար։ Այս լուրը ուրկէ որ քաղած էք բոլորովին անհիմն է եւ գինքը մոռէն ճանչցողներու համար ալ անակնկալ մը, որովհետեւ Զ... երբէք որ մը բողոքի ձայն մը բարձրացուցած չէ քօթրիին անդամներուն դէմ. այլ ընդհակառակը յատենական վերապահութիւն մը միայն ցոյց տուած է առհասարակ ամէն խնդիրներուն մէջ. տնչուչտ վախնալով որ իր այսօրուան իւղտ հացէն կը զրկուի...

«Ֆիլիպէի կեանքէ տեղեկութիւն ըլլալով իմացնեմ որ քիչ շատ գիտակից համարուող ընկերները ամէնքն ալ ձգած հեռացած են ընկերական շարքերէն ու այսօրուան քաղի մը տասնեակ խուժբերը կազմուած են միայն մոլեռանդներէ Պ... եւ քօթրի... մեծ ու պզտիկ ձագուկներէն եւ մկ լեվ վճարելէ զատ ուրիշ գործի չը խառնուողներէ։ Ամենաալ Պի...ին ձագուկներէն են։ եւ հակառակ մեր պայքարին... յաջողեցան օրիորդը պատգամաւոր ընտրել եւ անսահման իրաւունքներ տալ որ Կ. կոմիտէի անդամ ուղարկէ այն մարդիկը որոնք որ ինքը ամենէն յարմար գտնէ...

«Այսօրուան կացութիւնը այն վիճակին հասած է որ բողոքող տարրը դիլիմայի մը առջեւ կը գտնուի։ Այն է կամ կազմակերպութեան շարքերուն մէջ մնալ եւ մացողներուն պէս բարոյապէս ապականուած մրթնոլորտէն աղատիլ եւ կամ թէ բոլորովին ձգել ու հեռանալ։ Որովհետեւ բողոքող տարրը եթէ ուզէ մընալ բողոքել. ու միւնոյն ատեն աշխատիլ մաքրագործելու աննուղակի միջոցներով. բռել կուզեմ դատաստանական սրտութիւններով բողոքողի գլխուն քիլան մը կանցնեն որպէսզի ստիպուի դուրս ելլալ եւ քօթրիի անդամներուն հանգիտը չը խռովել։

«Ինչ որ է Ֆիլիպէն. տարակոյս չկայ թէ նոյնն է նաեւ բոլոր արտասահմանի կազմակերպական վիճակը. իսկ այս ուղղութեամբ յեղկազմակերպութիւն մը առաջ չի կընար երթալ ու միջոց որ զանազան մեծ ու պզտիկ Պիօներէ չը մաքրուին կազմակերպութեան շարքերը էվոլիւցիայի ընդհանուր օրէնքին հպատակելով կամ տեղի պիտի տայ ուրիշ կուսակցութեան մը երեւան գալուն. եւ կամ թէ յեղափոխական կուսակցութիւն կարենալ մնալու համար խիստ մաքրագործումի մը պիտի ենթարկուի։ Իբրեւ լաւատես (օպտիմիսթ) մաղթելով որ ապագայ ընդհանուր ժողովը մաքրագործումի այդ ժուարին բայց ստիպողական գործը կատարելապէս գլուխ հանէ. կը փակեմ սոյն նամակս խոստանալով միւնոյն ատեն ուրիշ առթիւ գրել կրկին»։

Այս նամակը ներկայացնում է Ֆիլիպէի կացութիւնը... մխիթարական է չէ՞։

Ռուսճուկից ստանում եմ մի ուրիշ նամակ. մի դէպքի մասին որ տեղի է ունեցել շրջանական ժողովից առաջ. երբ Կ. կոմիտէն նոյն վարիչները ունէր։

—«Ձեր Ռուսճուկէն Եւրոպա անցնելէն անմիջապէս վերջը. հոս եկաւ տաճկահայ հարուստ երիտասարդ մը։ Երեկոյ մը այդ երիտասարդը ծեծուեցաւ. գրեթէ իր հիւանդի մօտ, եւ չը հասկցուեցաւ իր ծեծուելուն

ԹՈՒՐՔՕ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱՒԱՆԻ ՔՍԱՆԵՒՀԻՆԳԱՄԵԱԿԸ

1880—1905

(Նիւթեր հայոց նորագոյն պատմութիւնից)

Զ.

(Շար. նախ. թիւին)

Երբ ամէն բան, մինչեւ վանքի վերջին աւելն ու ասեղն մաքրազարդուած էր Օմէր Աղան փող է հարկանել տալիս՝ հաւաքուելու եւ մեկնելու։ Երբ քրդական ժխորը վանքից դարդակումէ. երկոտասան թօռունները ներսը մնում են և կանչելով դողդոջուն վանահայրին պահանջում են վանքի գանձը, որ թագցրած է եղել. վարդապետը աղաչում, պաղատում է որ խնայեն իրեն ծերունի. ալեւոր հասակին և հեռանան վանքից. քանի որ արդէն ամէն բան տարած են և ոչ մի բան էլ չէ մնացած սաղ վանքում. ի՞նչ պիտի լինէր վանքի գանձը, բայց եթէ՝ իր ամբողջ կահ կարասին. որ թալանուել էր ամբողջովին։ Քրդերը անողոքելի են մնում. փակում են վանքի դռները և սկսում են խուզարկել քունջ ու բուջաղ գանձը որոնելու։ Շատ և երկար փնդռելուց յետոյ վերջապէս նրանց աջողվում է գտնել մի գաղտնի դէպի զանգակատան աշտարակը տանող անցք, և ոլորապտոյտ մի սանդուխից բարձրանալով ներքին պահարաններում պահուած վանքի ամբողջ հարստութիւնը՝ մեծագուժար ոսկի և արծաթ փող թանկագին գոհարեղէն, ոսկեղէն և արծաթեղէն անօթներ, սաղաւարտներ, եկեղեցական զարդեր. խաչեր ու մասունքներ, որոնք հինաւուրց ժամանակից այնտեղ ամբարած էին, ամբողջովին գրաւում, վար. են բերում։ Վարդապետը երկիւղ անելուց որ նրան այժմ անպատճառ նրանք կըսպանէին. փաղչում թագնուում է։ Վանքի սեծ բակում թօռունները նստում են միասին այդ մեծ կողոպուտը մէջերին հաւասարապէս կիսել բաժնելու։ Սակայն այդ բանում նրանց մէջ անհամաձայնութիւն է առաջ գալիս ամենմարդ ցանկանալով առիւծի բաժինը ինքը կորզել։ Գնալով վէճը լուրջ կերպարանք է ստանում և փոխուում է թշնամութեան, սկսում է սոսկալի ընդհարում ընկեր-ընկերի հետ, փայլում են շողշողուն կեռ սուրերը եւ խանչալները, որոտում են հրացաններն ու ատրճանակները և ապատիրում է խորը, մահուան լռութիւն։ Դուրսը եղած քրդերը կասկածելով դաւաճանութեան մասին իսկոյն խորտակում են դռները և կրկին ներս խուժում, ուր նրանց աչքին առաջ բացւում է սարսափելի արիւնահեղ տեսարան. բոլոր 12 թօռունների անշունչ դիակները ցիր ու ցան ընկած էին գետնի վրայ սրփռուած ահագին դանձի չորջը։ Կարծես կատարուած էր չլսուած-չտեսնուած մի աստուածային արդարութիւն և առնուած էր սրբապղծութեան ահռելի վրէժը.. Քրդերը սկսում են գաւազին ոռնալ և իրենց «վա՛յ լէ մէն» արտասուող ողբերովը օդը թնդացնել։ Յետոյ նրանք հայտնելով. կատարուած իրողութեան հետ հաւայում են գանձը եւ 12 դիակները եւ հեռանում են յուղարկաւորութեան թափոր կազմուած։

Այստեղ անցողակի կերպով հարց է ծագում թէ ինչի՞ են ծառայում մեր վանքերում այսպէս կուտակուած հինաւուրց դանձերը. ի՞նչի, բայց եթէ մի օր յայտնի կամ թագուն աւազակների աւարը լինելու...

«Կայծակը» մեզ առաջնորդեց վանքի ախոռը եւ ցոյց տուեց իր 8-ամեայ. բուն սրաբական ձիւնի պէս սպիտակ հրաշալի նժոյգը. որի արժէքն էր այն ատեն 300 օսմանեան ոսկի։ Արաբական ձիերը նշանաւոր և յարգի են այն պատճառով որ իրենց ազնիւ ցեղի պատկանիլը դարուց ի դարս դոկումենտներով վա-

պատճառը, երկրորդ օրը նոյն երիտասարդը ձեռնուեցաւ օթէլ Մեթրոպօլի ճաշարանի մօտ. 6 հոգիէ կազմուած խմբի մը կողմէ։ Ու իրենք դաշնակցական վարիչները գացին պարզեցին որ ծեծողը իրենք են, որովհետեւ իբր թէ անկէ տաս տարի առաջ իրմէ սատկ ու զօղր մասներ է եւ իբր թէ չրջարերական կայ եղեր որ այդ մարդը ուր որ պատահի ծեծուի եւ ատակները առնուի։ Վերջը հասկցուեցաւ որ իբր թէ սխալած են եղեր։ Ու ուզեցին երիտասարդին սիրտը առնել, եւ այդ ընելու համար չանթանի աղջիկներով միասին տեղ մը հիւրասիրելու հրաւիրեցին։ Դուք տաս տարիէ ի վեր Պուլկարիա էք. արդեօք այդպիսի չրջաբերական մը գոյութիւն ունի՞ եղեր, թէ ատիկա բացարձակ չարլաթանութիւն մըն էր եւ անզոյս աֆէրիստները իրենց օյինները ծածկելու համար կրցան կ կօմիտէէն պաշտօնական թուղթ մը բերել տալ„։

Ես իմ կողմից բացարձակ յայտարարում եմ որ այդ տեսակ չրջաբերական երբէք գոյութիւն չէ ունեցել։ Եթէ մէջ տեղը մատնութիւնը կայ. Դաշնակցութեան ձեռնհաս մարմինները մատնիչից ոչ սատկ կուզէին եւ ոչ էլ ծեծելով կը վախցնէին, այլ ուղղակի կըսպաննէին. որովհետեւ մատնութիւնը սատկով չէ մաքրվում։ Այդ բացարձակապէս ռեւէ ձրիակեր աշըղկէօղի գործ է, որը թերեւս զօրաւորապէս կապուած է եղել Ֆիլիպէի ձրիակերների հետ, եւ իր ձրիակերութիւնը մի քիչ արժէքով տալու համար, ուզեցել է իրեն գործի վրա ցոյց տալ։

Սուլինայից հաղորդում են ինձ. «Նախորդ չրջանական ժողովի պատգամաւորին, Վարդօին համակիր լինելու պատճառով, կազմակերպութիւնից հեռացրել են հինգ տարով եւ դրամական բաւական խոշոր տուգանքի ենթարկել Կազմակերպութիւնը խառնակ վիճակի մէջ է»։

Մի նոր, թէեւ չնչին բան, ես եմ աւելցնում։ Բօքա-Դոսպար—Խաժակին իբր պատասխան հրատարակած թռուցիկից մի օրինակ ուղարկեցի «Ռազմիկ» թերթի խմբագրութեան պահանջելով, մատնանշելով լրագրական էտիքան, որ այդ պատասխանը տպագրուի։ Մինչեւ օրս ոչինչ չերեւաց։ Այժմ հրապարակով պահանջում եմ այդ պատասխանի տպագրութիւնը, հակառակ պարագային պարտաւորված պէտք է լինեմ դիմել դատարանին՝ մամուլի օրինաց համաձայն վարուելու այդ խմբագրութեան հետ։ Մարդիկ՝ որոնք էթիկան չեն հասկանում, նրանց հետ օրէնքով պէտք է խօսել եւ հասկացնել որ աշխարհիս մէջ սեփական հայի համար ամեն էտիկա ոտքի տակ չէ կարելի տալ...

ՎԱՐԴՕ

ՎԵՑ ԱՄԻՍ ՊԱՐԻԶՈՒՄ

(Տպաւորութիւններ)

Այս անգամ կը ցանկայի խօսել Պարիզի բոլոր մուզէների մասին. բայց այդ անհնար է. Նրանք մեծ մասամբ այնքան հարուստ են, այնքան բազմակողմանի որ թէ ես անկարող եմ մի երկու անգամ այցելելով, ընդարձակ տեղեկութիւններ տալ և թէ հատորներ պէտք են այդ մուզէների մէջ եղած ուշագրաւ իրերը նկարագրելու։ Կը խօսիմ միայն դրանցից երկուսի, ամենափոքրերի մասին. «Կլիւնի» և «Գրէվէն»։ Առաջինը իր մէջ պարունակում է մի քանի դար առաջուան կահ կարասիներ, զգեստներ, գործուածքներ, զանազան ֆիգուրաններ—փայտէ, քարէ, պղնձէ—ոսկեայ, կրօնական պատկերներ, զանազան գործիքներ, կառքեր, գլխաւորապէս պալատական...

Այդ բոլորից աչքի է զարկում «պարկեշտութեան գօտին» որով ասպետները կապելիս են եղել իրենց կանանց, նստեյատեղին, այն ձեւով որ նրանք հնարաւորութիւն չունենան իրենց ամուսինների բացակայութեան միջոցին դաւաճանել։

Հետաքրքիր է, թէ այդ ժամանակվան ասպետները յանկարծ երեւային ներկայ Պարիզում. արդեօք պիտի կարողանայի՞ն այդ կողպէկաւոր գօտիով վստահ լինել իրենց խաբված չը լինելու մէջ. Կարծեմ ոչ. ամեն մի պարիզուհի հնարաւորութիւն կունենար տասնեակ բանալիներ շինել տալ իրեն ազատելով գոտին բանալ տալու — իրեն վրա գործ դրված վայրենի ճնշումի հեղինակին խստիւ պատժելու համար։ Բայց գոտին ապացուցում է թէ դեռ հին ժամանակներից սկսած ֆրանսուհու հաւատարմութեան և ողջախոհութեան աստիճանը թոյլ է եղել հակառակ նրա թունդ կրօնական լինելուն։ Այսօրուան ֆրանսուհին մանաւանդ պարիզուհին, իր աշխատասիրութեան հետ միասին—գլխաւորապէս զբաղուած է իր մարմնով. այր մարդի հաճոյանալու արուեստով։ Նա հոգս չունի տղամարդուն գիր գալու մտաւորական առաւելութիւններով, յարմարվելու նրա մտաւոր, ընկերային զարգացողական ձգտումներին տենչերին։ Նա ձգտում է միայն կին լինել—էգ լինել—հրապուրիչ, գրաւիչ էգ, և այդ ճիւղում նա առաջին կինն է աշխարհի վրա. դրա համար էլ զարմանալի չէ եթէ մի անհաւատ, հասարակական գործերով կլանված, եւրոպական մտաւոր զարգացողութեան փայլուն նմուշ Ժօրէս կարող է մի կրօնական կրթութիւնով, հայեացքներով, նախապաշարումներով կնոջ հետ կապել իր կեանքը. և ներկայ ֆրանսացին գոհ է ֆրանսուհուն ներկայ դրութիւնից. նրանից աւելի բան չէ պահանջում։

(Շարունակելի)

ՎԱՐԴՕ

—

«ՑԱՍ ՏԱՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Յուլիսին այս անունով մի բրօշիւր պէտք է յանձնվի տպագրութեան։

Բրօշիւրի նպատակն է, առանց խտրանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց։ Բնական է որ բրօշիւրի մէջ փաստօղ դօկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն։

Բրօշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր.

Դիմել «Շարժում»ի Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժօզէֆ քարափին վրայ. կըստանայ զանազան հայերէն թերթեր. Առհասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիններ և անհրաժեշտ տեղեկութիւնները.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նկարիչ Ֆէթֆաճեանի Անիի աւերակների գունաւոր եւ գեղեցիկ ալբօմներ եւ փոստ քարտերը մեծ քանակութեամբ ծախվում են Վիէննայում պ. Գ. Ամատունու մօտ։

Ալբոմի գինը, փոստի ծախքով, 3 քրօն է, իսկ փոստ կարտերի հատը փոստի ծախքով 20 հելլէր։

Պէտք է դիմել հետեւեալ հասցէին.
Գ. Ամատունի
Ստ. Բուվլը կասս թիւ 3 դիր 32.
ՎԻԷՆՆԱ

ւերացրած է, և հայր Բազունին մեզ ցոյց տուեց մի կտոր մագաղաթի վրայ գրուած այդ հիանալի նժոյգի ազնուականութեան վաւերականութիւնը կնքուած և ստորագրուած բազում արաբ շէյխերից և բէգերից։ Երեկոյեան նա մի ձիարշաւ կատարեց սոլօ հիւպատոսին ցոյց տալու թէ իր անզուգական ձիու ոյժն ու հունարը և թէ իր ձիավարութեան հըմտութիւնը Շատախցի քաջ վանականը մօտենալով ազնիւ կենդանուն քընքուշութեամբ շոյեց նրա սիրուն, երկայն բաշը եւ վիզը, համբուրեց լայն ճակատից գորովագին եւ հեծնել արչաւելն ու մեր աչքերից անհետանալը մի ակնթարթում կատարուեց։ „Կայծակը իր կայծականման նժոյգին վրայ կայծակի պէս սլացեր էր ու չկար! Մենք զարմացած, հիացած ափիբերան մնացել էինք. Ես յիշեցի մեր Աղա Սուրբ Սալզսի լեգենդան եւ սկսեցի պատմել կօնսուլին. Քիչ յետոյ հեռաւոր մի բլուրի գագաթին վրայ երեւեց մեր քաջարի ձիաւորը, ուր հետեւակ մը հազիւ մի ժամուց հասնել կարողանար։ Ազնիւ կենդանին 8–10 րոպէի մէջ կտրել էր այդ հեռաւորութիւնը!

Է.

Հետեւեալ առաւօտը մենք մեկնեցինք վանքից եւ երեկոյեան հասանք Բաշկալէ. Քաղաքի կառավարիչն էր այն ատեններ հռչակաւոր սահմանադրական Միդհատ փաշայի աները՝ Թօսուն փաշան որ իբր իր լուսամիտ փեսայի քաղաքական ուղղութեան հետեւողներից մինը աքսորուած էր Սուլթանի հրամանով այդ հեռաւոր անկիւնը, սահմանադրութեան վերահաստատումը Տաճկաստանում ապագային բոլորովին անկարելի դարձնելու համար։ Եօթանասնամեայ հուժկու, առոյգ, ու բախզուարթ մի հինաւուրց թուրք էր Թօսունը. Թէեւ ենիչարիական ժամանակներից մնացած, այլ սակայն բաւականի չափ ազատամիտ գոնէ իր քաղաքական հայեացքներում. Մեր տեսակցութեան միջոցին որ բաւական երկարատեւ էր եւ յորում այն ատեններ այնքան տաք կերպով յուզուած 61-րդ արտիկլի յօդուածի տրամադրած ռէֆօրմների հարցը շօշափուեց՝ փաշան լուսամիտ մտքեր արտայայտեց. Նա ընդունել էր որ առանց պետական հնացած մաշած, փտած սոսկալի ռէժիմը հիմնովին բարեփոխութեան ենթարկելու փրկութիւն չկար Թուրքիոյ համար, եւ թէ Սուլթան Համիտի բռնած ու հետեւած արդի քաղաքականութեան հետեւանքը անպայման պիտի վերջնական կործանման տանէր յանգեցնէր ամբողջ օսմանեան մեծ կայսրութիւնը.—բան մը այսօր արդէն կատարուելու վրայ մեր աչքերի առաջ։ Թօսուն փաշան կատարեալ մի Միդհատեան էր. Ռուսիայից նա ոչ մի յոյս չունէր Թուրքիոյ վերածնութեան ու քաղաքական զարգացման համար, ի նկատի ունենալով որ միապետութիւնք միշտ միմեանց թշնամի են եղել եւ շարունակ զիրար կործանելու վրայ են. «միայն Անգլիան է— ասաց նա.—մեր ճշմարիտ անկեղծ բարեկամը, որ անընդհատ աշխատել է Տաճկաստանի բարօրութեանը, բայց, աւա՜ղ որ Համիտը այդ բանը չկարողացաւ ըմբռնել եւ գնալով անջատուեց Ալբիօնից, դրժելով Կիպրոսի դաշնագրութեամբ յանձն առած պարտականութիւնները եւ տուած հանդիսաւոր խոստումները ի մասին երկրի վարչական բարենորոգմանց. Եւ այդ ցաւալի հանգամանքը շատ թանգ պիտի նստի մեզ ապագային մի օր»։

Նա խօսում էր զգացուած եւ յուզեալ, որպէս մի թուրք պատրիօտ, ջերմապէս սիրելով Օրխանների եւ Օսմանների հաստատած մեծ պետութիւնը եթէ ոչ Հայրենիքը որ չկար ու չկայ բոլորովին օսմանցի թուրքերի համար։—

(Շարունակելի)

ԳՆՏԱԿԻ ԼԵԶՈՒՆ*)

Կործանող ոգին նաեւ ստեղծագործող ոգի է։

Բակունին

Եւ սրբազան վրէժի ոգին դեռ ապրում է. Նա ապրում է նրա համար, որ «շրջանառութիւնից հանէ» բանւոր ժողովրդի և ազատութեան թշնամիներին,—բոլոր պարազիտներին ու դահիճներին։

Միակ լեզուն, որով կարելի է խօսել մեր կեղեքիչների հետ—դա գնդակի եւ ռումբի լեզուն է։

Եւ ահա բարձրանում է անիշխան-բանւորի վրիժառու ձեռքը ու առաջին անգամ Բաքւի պրոլետարիատի կեանքում կատարւում է հակաբուրժուազական, անիշխանական տերրորը։

Ընկաւ «օրինակելի քաղաքացի եւ հասարակական գործիչ» նաեւ պարագիտ Բօղդան Դօլուխանովը, նրա համար, որ համարձակւեց չկատարել բանւորների պահանջները։

Ընկաւ նոյնպէս հարստահարիչ Սկօբելեւը, որը համարձակւեց մերժել մեզ դրամ տալ։

Ընկաւ եւ լրտես Փոլժնիկովը, պետութեան եւ բուրժուազիայի այդ հաւատարիմ շունը։

*) Ծ. Խ.— Այս թռուցիկը Կովկասից է ուղարկուած եւ գրուած է ռուսերէն եւ հայերէն լեզւով. արտատպում ենք ցոյց տալու համար թէ երեկւան սարսափելի բռնութեան տակ հեծող ժողովուրդը ինչ լեզւով է սկսել խօսել։

Մեր չուրջը—բռնութիւն, ուստի եւ ապստամբ ոգին» չէ կարող բաւականանալ այդ ակտերով. Անթիւ են պարազիտներն ու տիրանները.—անթիւ պէտք է լինին և վրեժխնդրութեան ակտերը։

Եւ ահա կրկին խօսեց գնտակը. Նորից բարձրացաւ անիշխան բանւորի վրէժառու ձեռքը և տրւէն «շրջանառութիւնից հանւած է» Բաքւի յայտնի դահիճը—ոստիկանապետի օգնական Ժգենտին։

Թէև դրանք մեր առաջին հակաբուրժուազական եւ հակա—պետական ակտերն են,—բայց երբէք չեն կարող վերջինը լինել։

Բանւոր ժողովրդի արթնացման ժամը արդէն մօտ է. պրոլետարիատը չուտով կազատւէ սոցիալիստ պետականների, այդ րէակցիօն-պոլիտիկանների ձեռքից եւ կսկսէ կոտորել իւր գազան թշնամիներին, որոնց նկատմամբ անհրաժեշտ է լինել անխնայ «բարբարոս»։

«Շրջանառութիւնից հանել» պարազիտներին ու դահիճներին և դրանով մասսաների սիրտը լցնել յեղափոխական գաղափարով, բարձրացնել նրա ոգին, նրա ապստամբ ոգին—ահա մեր պրօպագանդը, «պրօպագանդը գործով», որը ընդունակ է շատ աւելի անել, քան պոլիտիկանների ճառերը, պրոկլամացիաներն ու խաղաղ պրօպագանդը։

Բանւոր ընկերներ.

Դէպի գործ. դէպի «պրօպագանդ գործո՛վ», դէպի զինւած յարձակումն սեփականութեան եւ պետութեան վրա. Հասել է ժամը. Արդէն ծածանւում է մեր խրոխտ դրօշը—Անարխիայի Սեւ Դրօշը։

Կորչէն պառլամենտ ու պոլիտիկանները

Մահ բոլոր պարազիտներին ու դահիճներին

Մահ Կապիտալին ու Պետութեան.

Կեցցէ պրօպագանդը գործով.

Կեցցէ մահն ու բռնութիւնը

Կեցցէ սոցիալական յեղափոխութիւնը

Կեցցէ Անիշխան Կոմմունիզմը։

Փեդերացիա Բաքւի Անիշխան կոմմունիստների «Նաբատ»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն կը հաղորդեն որ հայկական գաւառական թաղերու մէջ կրկին ձերբակալութիւններ սկսուած են։

— Վառնա եկող ճամբորդներ կը հաղորդեն որ անցեալ օր Պոլսոյ ոստիկանութիւնը Վառնա եկող պուլկարական նաւէն ուզեր է հայ ճամբորդ մը հանել, յեղափոխական տօքթօր Փաշայեանի տեղը ընդունելով։ Պուլկար նաւային ընկերութեան գործակատարը համաձայնած է, սակայն նաւապետը չէ համաձայնած և արի նաւապետին շնորհիւ տօքթօր Փաշայեան կարծուած հայը ողջ առողջ Վառնա հասաւ։

— Օսմանցի ծովահանները պարսից ծովի մէջ յարձակում գործեր են իտալական վաճառականական նաւի մը վրայ և զայն թալաներ են։ Իտալիոյ կառավարութիւնը Պոլսոյ դեսպանի միջոցով բողոքեր է Բ. Դրան, տուգանք պահանջելով և միենոյն ատեն երկու պատերազմական նաւ զրկեր է պարսից ծոցը։

— Հայոց Պատրիարքին հրաժարականին խնդիրը դեռ առկախ է։

ՌՈՒՍԻԱ

Զօրքերու մէջ ըմբոստութիւնները կը շատնան։ Ներկայ նախարարութեան հրաժարականը անխուսափելի է, մանաւանդ Պետական Խորհրդին Տումայի սովեալներուն նպաստի դրամ մերժման համաձայն քուէ տալու պատճառով։

— Տուման երեք պատգամաւոր ընտրեր է Անգլիա դրկելու միջազգային երեսփոխանական ժողովին մասնակցելու համար։

— Թիֆլիսի մէջ ռումբ նետուեր է պալատական պարտէզը—ուրուն պայթումէն ծանրապէս վիրաւորուեր է ոստիկանապետը։ Ուրիշ ռումբ նետուեր է դպրոցէ մը։ Պայթումը տեղը եկող զինուորները հրացան պարպեր են դպրոցին վրայ։

— Օտեսայի մէջ կրկին պատրաստութիւններ կը տեսնուին հրէաները ջարդելու։

ՖՐԱՆՍԱ

Տրէյֆիւս պաշտօնի անցած է հազարապետի պաշտօնով իսկ Պիքար ժէնէրալի։

Մ. ՑՈՒԼԱԿ

ԱՐՑՈՒՆՔՈՏ ՊԱՏԱՌՆԵՐ

Ա.

ՊԱՏՐԱՆՔԸ

(Բարիզահայ կեանքէ)

Բոլոր մարդոց դէմքերը ճշմարիտ են, ի՛նչ ալ իրենց ձեռքերն ըլլան.
Այլ չկա՛յ երբեք ճշմարիտ կին մը՝ ճշմարիտ դէմքով։
ՇԷՅՔՍՓԻՐ

Ա.

Այդ տարուայ վաղահաս աշնանավերջի ցուրտ գիշեր մըն է։

Կծու խայթիչ հով մը, սուրալով բովանդակ Բարիզի վրայէն, հանդիպողին դէմքը կ'ասեղնուէ, կը խայծուէ, կը ծակծկէ։

Քաֆէներու թէրրասները պարապ են, այլ ներքնակողմը, ջեռոցներու եւ ծխախոտի ծուխի միջոցով յառաջացած տաքին, թանձր գոլորշիացումով խտացած օդին մէջ, իւրաքանչիւր սեղանի չուրջը գտնուած աթոռ ու նստարան գրաւուած (լի) են, կը խօսին, կը խաղան, կը խմեն ու կը ծխեն, կ'ունկնդրեն երաժշտութեան եթէ կայ, ուրախ եւ զուարթ, անհոգ ու անտարբեր դուրսի դժխեմ եղանակին։

Բայց եւ այնպէս, հակառակ այդ մասերու բաղդատաբար ցանցառ անցորդներու թիւին, Լատինական թաղի ամենէ լուրկ անկիւնը, Պուլվառ Մօնբառնասս եւ Օպզերվաթուառ հրապարակին բոլորտիքը, մինչեւ Սէն-Միշէլի անչչուկ կէս ճանապարհը արտակարգ աղմուկի եւ իրարանցման մէջ է. Երգ, պոռչտուք, բարձրաձայն խնդուքներ, երկու սեռի կողմէ եւս, խուլ ժխորով մը կը խանգարեն սովորական հանդարտութիւնը։

Շաբաթը երեք անգամ, հինգշաբթի, շաբաթ եւ կիրակի, այս անկիւնը, հակառակ ձիւնի, ցուրտի փոքի կամ անձրեւի, պէտք է խռովուի, որովհետեւ ասոնք պարահանդէսի բացման գիշերներն են,—«Պալ Պուլլիէի»։

Շաբաթ եւ կիրակի, ինչպէս եւ տօնական օրեր, քիչ մը չափազանց ռամկական ու բազմագունի է այս անթառամ յիշատակներով՝ մինչ անմոռաց միալ սահմանուած պարահանդէսը, երբ կը հաւաքուին իր հիւրընկալ սանիքին ներքեւ ամէն դասէ ու գոյնէ ներկայացուցիչներ,—խոշոր տափատներով ալճերիական զուավներէն, զինուորներէն ու նաւազներէն մինչեւ Սէն Միշէլ ու Սէվաստօբօլ պուլվառները անխուսափ տողանցումով մը չափչփող Բարիզեան մայթերու նուաստ տիրուհիները—մինչ հինգշաբթի գիշերներ, իր խաղքութեան մէջ չըլլալով հանդերձ նուազ, այլ ընդհակառակը, կրկնապատիկ ու եռապատիկ. պարահանդէսը կօժտուի բաղդատաբար աւելի ընտրեալ դասով մը. Բացառապէս ուսանողական է սա, իրենց «ուսանողուհիներով»։ Առջիններուն մէջ կը գտնուին այնպիսիներ՝ որոնք կրնան մեծ հօր դեր կատարել. բայց եւ այնպէս, այցետումս մը գրպանին՝ որպէս իրաւաբանութեան, կամ բժշկութեան կամ փիլիսոփայութեան կամ մաթեմաթիկայի եւ կամ ո եւ է այլ մասնագիտութեան մը ուսանող՝ տակաւին կը շրջին հոս ու հոն, մէկ քաֆէէն միւսը պարահանդէս, թատրոն ամենուրեք վատնելով կամ բարեմիտ հօր մը ուղարկած ամսավճարները եւ կամ իրենց «ուսանողուհիներուն» վաստակը, որոնք ուրիշ բան չեն՝ այլ եթէ Լատինական թաղի կեդրոնին չուրջը սալայատուած նշանակելի քաֆէներուն գիշերային այցելուները եւ կամ այս ու այն ունեւոր առեւտրականին պատահական հոմանուհիները։

Այդ իրիկուն կայցելեն նաեւ տօքտորներ, փաստաբաններ, բանաստեղծներ, գրողներ եւ երաժիշտներ՝ որոնցմով կը վխտայ Լատինական թաղը եւ որոնց թիւը թերեւս առաւել է քան խանութպաններունը։ Հինգշաբթի իրիկուն կուգան Պիւլիէ նաեւ մանր առեւտրականներ ու չըրչիկ վաճառականներ՝ մէկ գիշերուան մը համար վարձուած օթօմօպիլներով, առոր մշտական ակբը ճանչցուելու անպատում տենչով, այցելու հուրիներէն հնար եղածին չափ մեծ քանակ մը հրապուրելու կանխահոգութեամբ։ Վերջապէս, այդ գիշերները բացառիկ են ու նուազ հանգամանքներով օժտուած մահկանացուները կզգան այդ եւ խոյս կուտան։

* * *

Հինգշաբթի գիշեր է, ժամը 10 ու կէսին ժամանակները։

Տեսարանը կը բացուի պարահանդէսի ներսի կողմը։

Նոր կանգ առած երաժշտախումբը, պարողներու բազմութիւնը կը փութայ իր աթոռին, զովացուցիչ ըմպելի մը կուլ տալու՝ ցատկոտուքի երկար շրջանէն վերջ։ Ոմանք օգուտ քաղելով միջանկեալ պարապութենէն, կը ջանան իրենց խիղկատակութիւնները աւելի ազատօրէն ցուցադրել։ Կը յոգնին, կը ջլատին ու իրենք եւս իրենց կարգին կը դիմեն պատ՝ զովանալու։ Ինչպիսի՛ ահռելի ժխոր մըն է, դէմքերու ինչպիսի՛ միջազգային ցուցադրութիւն մը, ուր կարելի է, սկսած միքատօներու եւ Նապաններու աշխարհէն, մինչեւ յետին ցեղի մը դիմագծերը տեսնել։

Ժամանակը կը յառաջանայ, այլ և դեռ կուգան այցելուներ, առհասարակ պարահանդէսին ծանօթ դարձած թագուհիները, որոնք, վստահ իրենց անմիջական յաղթանակներուն, վախճանին միայն կերեւին։

Այդ փոքրաքանակ եկուորներու հետ ներս կը մտնէ նաեւ երիտասարդ մը, մեծապէս վարանոտ ու անորոշ քայլերով, տեղւոյն անծանօթի մը ակներեւ շարժուածքով։

(Շարունակելի)

—o—

Пчатница на П. Глушковъ С-ѣ Вар.